ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 433
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքը (Խոտ, Հարժիս և Տաթև բնակավայրերը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Գորիս համայնքի (Խոտ, Հարժիս և Տաթև բնակավայրերը) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքը (Խոտ, Հարժիս և Տաթև բնակավայրերը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Սյունիք-7 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի (Խոտ, Հարժիս և Տաթև բնակավայրեր) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
09-047-0102-0006, 09-056-0125-0002 և 09-097-0301-0001 կադաստրային ծածկագրերով հողամասերից առանձնացված՝ համապատասխանաբար 0.50589 հա, 0.18521 հա և 0.12094 հա մակերեսներով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ, անտառային և անտառային /թփուտներ/ հողեր	09-047-0102-0006, 09-056-0125-0002 և 09-097-0301-0001 կադաստրային ծածկագրերով հողամասերից առանձնացված՝ համապատասխանաբար 0.50589 հա, 0.18521 հա և 0.12094 հա մակերեսներով հատուկ նշանակության հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պայմանը (կցվում է):

4. Տաթև համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Խոտ, Հարժիս և Տաթև բնակավայրերի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի (Խոտ, Հարժիս և Տաթև բնակավայրերի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Լ.Առաքելյան

Երևան, «26» «դեկտեմբերի» 2025 թ.